

ՀԱՅԿ. ՍԱՐ. ԺՈՂԿՈՄՄՈՎԵՏԻՆ ԿԻՑ  
ԶԵՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՏԵՆԱԳՐԵՐԻ ՍԵՐԻԱ. № 1.

# ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առաջարտնության լեզվի ծանրագրություններով

Կազմեցին՝

ՀՈՎՀ. ՄՈՒՎԵԼՅԱՆ

ՀՈՎ. ԱԲՐՈՀՅԱՆՅԱՆ

9(47.925)  
Մ-28

ՅԵՐԵՎԱՆ - 1940

05 OCT 2011

31 AUG 2007

ИНСТИТУТ ПО ИЗУЧЕНИЮ РУКОПИСЕЙ  
ПРИ СНК Арм. ССР.

СЕРИЯ ИСТОРИОГРАФОВ № 1.

# Б Е З Ы М Я Н Н А Я ЛЕТОПИСЬ

С предисловием и примечаниями

Составили  
ОВ. МАНВЕЛЯН  
АР. АБРААМЯН

ЕРЕВАН—1940

ՀԱՅԿ. ՍՍԻ ԺՈՂԿՈՄՄՈՎԵՏԻՆ ԿԻՑ  
ԶԵՌԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐՈՒԹՅՈՒՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՄԱՏԵՆԱԳՐԵՐԻ ՍԵՐԻԱ. № 1.

9(47.920)  
8-28 ար.

# ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանով լիւ ծանոթագրություններով

Կազմեցին՝  
ՀՊՀ. ՄԱՆՎԵԼՅԱՆ  
ՀԱՐ. ԱԲՐԱԱՄՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ—1940

## ՅԵՐԿՈՒԻ ԽՈՍՔ

Հրատարակության հանձնվող ժամանակագրությանս հեղինակն անհայտ է: Ինչպես նկատելի ե բնագրից՝ ժամանակագրությունն ավարտվում է 1300 թվականին, վորով շատ դյուրին ե յեղբակացնել, վոր սրա հեղինակն ապրել է 13-րդ դարու յերկրորդ կիսին և 14-ի սկզբներին: Նշված ժամանակամիջոցում չունենք համապատասխան գրական անուն, վորին կարելի լիներ վերագրել սույն յերկասիրությունը: Ժամանակագրականորեն հեռու է նաև Վանական վարդապետից՝ վորպեսզի կարողանայինք նրա՝ դեռ մինչև այսոր անհայտ մնացող պատմությունն համարել: Հենց այս պատճառով ել այս աշխատասիրությունն անվանում ենք „Անանուն ժամանակագրություն“:

14-րդ դարին վերագրելու մեր ապացույցները հետեւյալներն են: Նախ՝ վոր հնագույն, № 2174 ձեռագիրը պատկանում է 14-րդ դարին և ավարտված է 1309 թ. Տեր Ավագ անունով գրչի ձեռքով. թեև առաջին մասն այլ ձեռագիր է, սակայն նույնպես վերաբերում է 14-րդ դարին: Դժբախտաբար այս ձեռագրում, թերթելի պակասության պատճառով ժամանակագրությունն ընդհատվում է հայոց թվականության ՈԿԹ-ին: Յերկրորդ՝ վոր մյուս ձեռագիրը (№ 3425), վոր շարունակության մնացորդն է, ընդգրկում է հայոց ՈՒԶ թվից մինչև ԶԼԹ. ըստ վորում յերկուսի համեմատությունից հայտնապես յերկում և նրանց մեջ յեղած ժամանակագրության կտորների միևնույն բնագրին պատկանելը:

Նախորդ՝ № 2174 ձեռագրի 1309 թ. ավարտվելը, կամ՝ մեր այս բնագրի հին որինակի 14-րդ դարին պատկանելը հիմք

Պատ. Խմբ. Ա. Պողոսյան  
Տեխ. Խմբ. Զ. Մարուխյան  
Սրբագրիչ Մ. Հաննագարյան  
Կոնտրոլ սրբագրիչ Ա. Բաբայան

չի տալիս յենթադրելու, վոր ժէ դարին պատկանող № 3425 ձեռագրի՝ մեղ հետաքրքրող ժամանակագրության վերջից պակաս լինեն թերթեր: Հստ այսմ ել՝ ժամանակագրության հեղինակը պետք ե իր յերկն ավարտած լինի 14-րդ դարի սկզբին:

Բնագիրը կազմել ենք հիշյալ յերկու ձեռագրերի հիման վրա, վորոնք փաստորեն միմյանց շարունակությունն են կազմում: Թերթերի կորստյան պատճառով, շատ քիչ մասն ե, վոր զուգընթաց ե գնում, սակայն այդ քիչ մասն ել նպաստեց ճանաչելու և ի մի բերելու տարբեր ձեռագրերում յեղած յերկու հատվածները:

Ժամանակագրության արժեքը կարող ե նկատել ամեն մի ընթերցող, վորն զբաղվում ե մեր պատճության հարցերով: Հեղինակն իր ժամանակագրությունը սկսելով «տիեզերքի ստեղծագործությունից»՝ մի շաբք յերկու յթներ նկարագրում ե այլ կերպ, քան հանրածանոթ աղբյուրներումն են. որինակ, ծննդաբանությունը կազմված ե վոչ ըստ վակերական աստվածաշնչի, և վոչ ել ըստ Պատմահոր տրադիցիայի՝ ինչպես մեր մյուս պատմիչներն են վարվել: Մեր հեղինակը, վորպես միակ բացառություն, ոգտվել ե նաև անվակեր կամ պարականուն համարված գրքերից, և կամ ուղղակի ժողովը դի մեջ տարածված Քաղեական զրույցներից:

13-րդ դարու 60-ական թվականներից հետո ժամանակագիրն ինքնուրույն ե. նա չեր կարող ոգտվել վոչ կիրակութից, վոչ Վարդանից և վոչ ել Միխթարից կամ Որբելյանից, քանի վոր հիշված պատմիչներից՝ միայն Որբելյանն ե, վոր իր «Պատմություն Տանն Սիսական» հասցնում ե մինչև 13-րդ դարի վերջը, իսկ մյուսները 60-ական թվականներից այս կողմը չեն անցնում: Որբելյանից ել ոգտվել չեր կարող, վորովհետև նրա գիրքը գեռ ասպարեզ չեր իջել: Բացի վերոհիշյալներից՝ ավելացնենք, վոր ժամանակագիրը շատ գեղքերի նկարագրության մեջ ինքնուրույն ե և ոգտվել ե այնպիսի աղբյուրներից, վորոնք առաջմ մեղ ան-

հայտ են: Այս առթիվ հիշատակելի ե Զաքարյանների տոհմական ծագումը բացարող հատվածները, կուսավորչի տան վերաբերյալ զրույցը և այլն:

Ժամանակագրության ձեռագիրը մշակելիս աշխատել ենք հարազատ մնալ ընագրին. լեզուն, ուղղագրությունը, ինչպես և ուղղագրական սխալները (բացառությամբ շատ կոպիտ սխալների) թողել ենք նույնությամբ: Ընթերցանությունը զյուրացնելու համար փոփոխել ենք միայն կետագրությունը:

Պատմությանս առաջին մասը,—վոր բովանդակում երթիրլիական ավանդություններ, սկսած Աղամից մինչև մեր թվականության սկիզբը,—զուրս գցեցինք, նկատի առնելով, վոր այդ հատվածները մեծ մասամբ տառացիորեն զուգադիպում ելին Աստվածաշնչի կանոնավոր գլուխներին կամ վերցված են մեր պատմիչներից: Սակայն, կային նաև մի քանի հատվածներ՝ պարականուն զրույցներից, վորոնցից հետաքրքրության համար թողնում ենք մի քանիսը:

Վորքան ել մեկը մյուսին լրացնող ձեռագրերից ենք կազմել այս ժամանակագրությունը, այնուամենայնիվ ՈԿԹ և ՈՀԵ թվականների արանքում մնում ե մի քանի տարվաքաց, վորը ցույց ե տրված բաղմակետերով:

Ինչ վերաբերում ե բնագրի մեջ նկատվող մի քանի անախրոնիկ թվակարգություններին՝ ապա մենք այդ թուղինք նույնությամբ, վորովհետև գրանք փաստորեն անձըշտություններ չեն, քանի վոր ընդհանուր առմամբ թվերն ու դեպքերը համապատասխանում են իրար, միայն դասավորված են հետ ու առաջ:

ԿԱԶՄՈՂՆԵՐ

## ԺԱՄԱՆԱԿԱԳԻՐ Է

Յորժամ յանցաւոր եղև Աղամ պատուիրանացն Աստուծոյ, հան զնա Աստուած ի դրախտէն փափկութեան...

Յետ ձև ամի ելիցն ի դրախտէն եղև որդի միիթառ բութեան Աղամայ Սեթ. եկաց այլ ևս Աղամ Չ ամ և մեռուաւ. և է ամենայն ամք նորա ԶԼ: Սեթ ՄԵ ամաց եղեալ ծնանի զենովս. և եկաց այլ ևս ՉԵ ամ...

Սայ արար գիր և գրեաց յԲ-Ն տախտակս մինն պղնձի և մինն ինցի. և գրեաց ի նոսա զամենայն անուանսն, զոր եղեալ է Աղամ. զի մարդարէացաւ թե Բ հետ անցանելոց է աշխարհ ջրով և հրով. թէ ջրով անցանէ՝ պղնձն մնա և թէ հրով՝ թրծեալ աղիւսն:

Յելանելույն Աղամայ մինչև ի փոխելն ենովքա ՈՆՉԵ ամ է... ՀԱ

Ի փոխմանէն ենովքա մինչև ի ջրհեղեղն ՇԾԷ ամ է. յԱղամայ՝ ՍՄԽԲ ամ է...

...և Նոյ որդովքն իւրովք և կանամբքն տապանաւն ապրեցաւ, զոր հրամահաց նոցայ Աստուած առնել: Ի ջրհեղեղն մինչև յաշտարակն Շ ամ է: Եւ թէ զի՞նչ է աշտարակն. որդիքն Նոյի որ յետ ելանելոյ ի տապանէն բաժանեցին զաշխարհս և աճեցին և լցին. և էին ամենայն մարդիկ մի լիզու, զոր ասէն թէ քաղդէացի լիզուն Ե՝ որ է ասորին: Եւ միաբանեալ ժողովեցան ՀԲ զլիւաւորք տանուտէրք և խորհեցան զնալ յարևելս և գտանել զդրախտն, ուստի և զրկեցան նախաստեղծքն. և ոչ կարացին գտանել զի ահա ծով լայնանիստ ընդ դեմ անկեալ անջրպետեալ էր զնայ յերկը և շմբնդաղ ծածկեալ էր զնայ. և էր դրախտն

բարձր յերկը ի վերայ լիրինն բարձու որ է հաւասար լոյմնին: Իբրև ոչ գտին խորհեցան և ասեն. վասն մեղաց եկն ջրհեղեղ և ապականեաց զաշխարհ և եղև ծով ի մեջ մեր և դրախտին. եկայք խնդրեսցուք զտապանն որով ապրեցաւ Նոյ: Իբրև ոչ կարացին գտանել, ասեն. եկայք շինեսցուք աշտարակ բարձր, որ թէ եկեսցէ ջրհեղեղ պահեսցէ զմեղ: Եւ ժողովեցան յերկըն Սենաար, ի զաշտն Քաղանէ, արկին հիմն և սկսան շինել, ոսկեղէն և արծաթի խարսխաւք, պատուհանաւք լուսաբերաւք, զնէին լոյսատու ակունս առ պատուհանաւքն: Եւ շինէին զամառն և զգարունն և ելանէին իբրև զշար մրջմանց և իջանէին գործաւորքն: Եւ զամս Խ անդադար շինէին, մինչև հասուցին յաւդն ործկուտ և մղծկուտ և սատակուն, յորս թոչուն ոչ վերանա, զի թեքն բոցակիզեալ լինէին և անկանէին. և ոսկին հալէր յաւդոյն ջերմութէնէն: Եւ բարձրացուցին Փ ամսոյ ճանապարհ ի վեր, ընդ իջանեն և ընդ ելանեն. և հաւասար և հանդէպ դրախտին բարձրացաւ գլուխ բրդանն, մինչև ինքն Աստուած ողորմեցաւ և զադարեցոյց ի զործոյն. որ և ասեն թէ հրեշտակ առաքեաց առ Ներովրթ՝ որ իշխանն էր գործոյն որ ասէ. այսպէս ասէ Տեր Աստուածն երկնի և երկրի...

Յաշտարակին շինելոյն մինչև յառաջին ամն Արքահամու ՆԽԲ ամ է: Արքահամս այս սիրելի Աստուծոյ կոչեցաւ, սայ էր որ ընական աւրինաւքն էգիտ զԱստուած. յորժամ ԺԵ ամաց եղև սկսաւ խնդրել զԱստուած, մինչև Հ ամն: Զի երկիրն Քաղդեացիոց պարարտ էր և բազմաբեր և վայելէին ի բարիմն և հաճախեցին ի մեզս և ի չարիս. վասն այնորիկ առաքեաց Աստուած ճայից երամմ՝ ուտել զվաստակս նոցա. վասն որոյ սակաւ կարէին վաստակել և պահէին զվաստակս իւրեանց և անկան յաղքատութիւն: Եւ Արքահամ պահէր զվաստակս հաւը իւրոյ: Ի զիշեր զարուեստ զամտղագիտութեան ուսանէր և ի տիւն զվաստակսն պահէր: Եւ զիցն զոր պաշտէին մատուցանէին զադաթս և զզոհս ամենայն և ոչ զիւշէր նոցայ ի ցասմանէն: Ապա խորհի Արքահամ և ասէ ի միտս. թէ պատուհասս մեր ի դիցս էր, զոր

պաշտեմք՝ Փըրկէին զմեղ. բայց ոչ է ի սոցանէ։ Եւ ինքն յաստեղացն յարուեստէ ուսաւ թէ գոյ Աստուած։ քանզի ասաց թէ ամենայն լուսաւորք որ է յերկինս միշտ ի շարժման կան և ի ներքոյ հարկի, յայտ է թէ այլ ոմն գոյ որ կառավարէ սոցա և մեղ անձանաւթ։ և ապա սկսաւ պաղատանաւք ասել. անձանաւթ Աստուած ամենայնի, արարիչ այս թռչնոցս, դու հալածեայ զսոսայ։ Եւ նոյն ժաման անհայտ եղին. և ասաց Աստուած գտաք. զԱստուած (?) և աւրհնեալ է տէրութիւն քո և փառք քո լցէ զամենայն երկիր։ Եւ պատմեաց ի տան հաւը իւրոյ։ Եւ ապա երևեցաւ նմայ Աստուած և ասէ...

Յաղամայ մինչ ի ծնունդն Քրիստոսի ամք ԻՇԼՅ. ըստ հայ թարգմանչացն։ Եւ ի ժամանակս Ոգոստոս կայսեր և ի ծնանեն Քրիստոսի, եկին մոդքն յարելից Գ թագաւորք ԺԲԸ զաւրաւք և լուսն եթէ սովէ է ի Պաղեստին և թողին զզաւրսն ի Պաղեստին և ինքեանք ԲԺ իշխանաւք և այլ հեծելաւք զնացին յերուսաղէմ։ և այս են անուանք նոցայ. Մելքոն՝ Պարսից թագաւոր, Գասպար՝ Հնդկաց թագավոր, Բաղդասար՝ Արաբացոց թագաւոր։ Եւ բերին ընձայք Քրիստոսի ոսկի և կնդրուկ և մուռ, զի թագավոր էր և աստուած և մեռանելոց էր վասն մեր. բերին ոսկի՝ իրեկ թագաւորի և կնդրուկ, որ է խունկ՝ Աստուծոյ և զմուռ՝ իրեկ զմեռելոյ։ Խըրբաթ երիկուն յայդ շաբաթ ծնաւ Քրիստոս և վաղն մոգքն եկին. և յորժամ դարձան մոգքն յաշխարհն իւրեանց Հերովդէս որ թագաւոր էր երուսաղէմի կոտորեաց ի Բեդիսհէմ և յերկիրն իւր Անկի մանկունս տղայ։ Եւ Քրիստոս կոյսական գրկաւքն յետ Բ ամի ծննդեանն զնաց յեղիպտոս։ Ի ծննդէնէն մինչև ի Ս. Գրիգոր և ի Ժէ ամս Տրդատա են ամք Յժ։ Կամիմ քեզ ցուցանել վասն սրբոյն Գրիգորի, թէ յորմէ ազգէ էր մեր լուսաւորիչն. յԱղամայ մինչև ի մեծն Արքահամ իԱ. նահապետ է. և Արքահամու Զ որդի լինի ի կենտուրայի կնոջէ իւրմէ. և յուղարկեաց զնոսայ յարեանաւ. ի սոցանէ են ազգն Պարթևեաց, յորմէ են թագաւորք Պարսից և Հայոց, որ և Բահլաւունիք և Արշակ

կոչեցան։ վասն այն կոչեցան Պարթևք, զի քաջն Արշակ յետ կ ամաց մահուանն Աղեքսանդրի ապստամբեալ ի մակեդոնացցոցն թագավորեաց յերկիրն Քուշանայ ի Բահլշանաստան. և բնակեցաւ ի մէջ Դ ազգի, Պարսից, Հայոց. Քուշանաց\*։ և զի ի գիմաց և ի թիկանց, յաջմէ և ի ձախմէ թեեալ էին, պարթևք կոչեցան, այսինքն՝ պարունակեալք ի Դ-ից ազգաց. և վասն Բահլ քաղաքին արքունական Բահլաւոք կոչեցան։ Յայսմ զարմից էր սուրբն Գրիգոր և որդի Անակա լեալ [որ] նենգութեամբ սպանանէ զիուրով արքայ Հայոց զնայր Տրդատայ. այլ ինքն ոչ կարաց զերծանել. սպանաւ և ինքն և իւրքն ամենայն. և սուրբն Գրիգոր տղա էլ ի ստիսս զայեկացն, զոր առեալ փախուցին ի կեսարիայ և մասդ մնուցին աւրինաւքն Քրիստոսի, և անդ ուսաւ Յուն և Ասորի գիր։ Եւ եղեալ Բժ ամաց ոմն Դաւիթ անուն ամուսնացցոց զնայ ի զուստր իւր, Մարիամ անուն. և լինի Բ որդի և մեկնին ի միմեանց. և գնաց Մարիամ ի կանանց վանսն անդրանիկ որդովն և կրսերն զնաց զնետ ճգնաւորի ումեմն Նիկոմոս քեայ անուն. և Գրիգորիոս անցեալ զնար առ Տրդատ թագաւորն Հայոց և բազում չարչարանս կրէ Բ. ամ յեկեղեաց զաւարին. և յետ այնորիկ եղեալ լինի ի Խոր Վիրապին ԺԴ ամ։ Եւ պատուհասի թագաւորն Տրդատ և զաւրքն իւր այսահարէին և թագաւորն ի կերպարանս խողի լինէր։ Եւ հրամանաւն Աստուծոյ ելեալ սուրբն Գրիգոր ի Վիրապէն բժշկեր զթագաւորն և զամենայն զաւրսն և Աստուածաշնորհ վարդապետութեամբն\*\* լուսաւորէր զազգն Հայաստանեայց։ Եւ ի սրբուն Գրիգորէ մինչև ի Հայ թվականն ՄԽԳ ամ է։

Ցուցից և զպամառ զնելոյ թվականին հայոց. Տէր Մովսէս կաթողիկոսն<sup>1</sup> հայոց, որ է ի զեղծէ Եղիավարդայ եկաց կաթողիկոս ամս է. Սայ ի Ժ ամի իւրոյ հայրապե-

\* Զորբորդը չի հշված բնագրում։

\*\* № 3425 ձեռագրում ժամանակագրությունը պահպանվել և սկսած այդտեղից. ստկայն բնագիրը սրանից հետո ել կազմել ենք ըստ № 2174-ի, համեմատելով իրար հետ։

տութեան և ԱԱ. ամին Խաւարովոյ<sup>2</sup> որդոյ Կաւատայ և ի  
ԺԴ Յուստիքանոսի<sup>3</sup> կա[յ]սեր հոռոմայեցոց, որ զուրբ Սո-  
վի շինեաց, յայսմն ժամանակիս եղավ թիւ հայոց և տռ-  
մար ազգիս մերոյ: Եւ էր ի ծննդէննէն Քրիստոսի մինչև ի  
դիր թվականին ՇԾՂ<sup>3</sup> ամ. զի Անդրիաս եպիսկոպոս<sup>4</sup>  
եղբար Մանդնոսի եղեալ էր կանոն Մ ամաց, որով զղատիկն  
առնէին և այն բովանդակեալ էր և վճարեալ. և վասն այ-  
նորիկ եղին զթվականն: Անդրիաս Աղեկանդրացի այլովք  
իմաստամբովք կարգեցին զհինգ հարիւրակ բոլորն և այ-  
նու ուղղեցաւ: Ի թվին հայոց ի Կ երևեցավ Մահմէտ. զի  
ընդ նուազել թագաւոր թագաւորութեանն Պարսից Սատա-  
նայեան<sup>5</sup> ազգին վեր երևեալ ոմն Մահմէտ, որ էր ծնեալ ի  
քաղաքին Մադիամ<sup>6</sup> մերձ ի Մաքա, Բ աւրեայ ճանա-  
պարհ, յազգէն որ կոչի Կուրել, յորդոցն Կեղարու<sup>7</sup> որդի  
Արդլա, որ մեռաւ որբ թողեալ զնոսա. և յարեցաւ ի վա-  
ճառական մի և եղեւ ի տան նորա յառաջադէմ: Մեռավ վա-  
ճառականն և նա տիրացաւ տան նորա և առ զկին նորայ  
և երթայր ուղտաւք յԵզիպտոս: Էր սայ այր վարագ և  
աղեղնաւոր և շրջէր յանապատու. և ի միում աւուր պատա-  
հել նմայ զի կերպարանել սատանայի ի ձեւ երէի և տար-  
եալ դիպեցուցանէր զնայ արիստական<sup>8</sup> կեղծաւորի միայնա-  
կեցի ումեմն, որում անուն էր Մարգիս<sup>9</sup>, որ գիտէր լեզու  
խմաելացի և պարսիկ: Եւ ինքն սատանա չիք եղեալ ի  
տեղոջէն. և տեսեալ Մահմէտի զմիանակեցն, քաշեալ զա-  
ղեղն կամէր հարկանել. իսկ նորայ բարձր ձայնեալ ասէր.  
մի մեղանչէր որդեկ. զի ես իբրև զքեզ մարդ եմ. և ասէ  
Մահմէտ. զի մարդ ես վասն էր կաս ի քարանձաւդ. յայն-  
ժամ սկսաւ ուսուցանել Մահմէտի ի հին և ի նոր կտակա-  
րան[ա]ցն ըստ Արիոսի որ արարած ասաց զորդո. ուսուց և  
զդիրս մանկութեանն Յիսուսի: Եւ մինչդեռ չէր հասու լիալ  
եհաս նմայ պատճառ գնալ ի ներքսագոյն անապատն և ոչ  
ևս դառնալ առ վարդապետն և ոչ սիրեաց զքրիստոնէու-  
թիւն. և այլ կամեցաւ ուսանել զինչ է հրէութիւն. և յոր-  
ժամ տեղեկացաւ անգունեաց և զայն և սկսավ յինքէնէ ա-

սել մտածին նոր հաւատ և երբեալ ի Մաքայ քարոզեց  
ըստ իւր կամացն:

Ի թվին կի բարժանեցան Վրացիքն ի միաբա-  
նութէնէ Հայոց<sup>10</sup>. զի Հյորժամ վաղմանեցաւ եպիսկո-  
պոս Վրաց և եկեալ նոցայ առ տեր Մովսէս կաթողիկոս զի  
տացէ նոցայ եպիսկոպոս. և նայ ձեռնադրեց նոցայ զփա-  
կակալ եկեղեցոյն Կրիոն<sup>11</sup> անուն, որ էր ազգաւ Վրացի.  
զնայ ձեռնադրեց կաթողիկոս Վրաց և հաւատաց թե պահէ  
զսէր և զմիաբանութիւն սրբոյն Գրիգորի. զի մինչ ի յայն  
ի Հայոց ունէին Վրացիքն զձեռնադրութիւն: Այլ Կիրիոն  
յետ մահուան Մովսէսի ի բաց եկաց յուղեղ հաւատոյն և  
զքաղկեդոնին խոստովանեցաւ զոր յառաջ խմորեալ էր և  
իբրև զկայծ ընդ հարդիւ թագուցեալ և ոչ իշխէր յայտնել  
ի կենդանութեանն Մովսէսի: Քանզի ի տղայութեանն զնա-  
ցեալ էր սայ ի Կողոնիոյ գաւառէ<sup>12</sup> ի գեղէն Նիկոյպաւ-  
լիս<sup>13</sup> յեզր Գայլ գետոյ<sup>14</sup> և ապայ եկն առ տէր Մովսէս  
և կացոյց զնայ վանաց երէց սրբոյ կաթողիկէին և քորե-  
պիսկոպոս Արարատեան գաւառին ամս և և յորժամ ձեռ-  
նադրեաց զնայ առաջնորդ Վրաց, եկն առ նայ խուժիկ մի  
նեստորական որ կոչի Կիս<sup>15</sup> այսինքն՝ խատութիւն, որպէս  
և եղեւ իսկ. և էր սայ ի Կողոնիոյ՝ գեղչէն Զուտառի<sup>16</sup>, մաւտ  
ի Նիկոյպաւլիս և էր ուս[ու]մնակից Կիրիոնի և աղանդա-  
կեցք միմեանց. և Կիրիոն ձեռնադրեաց զնայ եպիսկոպոս և  
եղեւ նմայ Կորու[ս]տ և աշխարհին իւրոյ: Եւ տէր Մովսէս  
կալեալ զկաթուղիկոսութիւն ամս և եկաց տեղապահ զնետ  
նորայ Վրթանէս քերթող<sup>17</sup>: Յաւուրս սորայ տեսեալ զթիւ-  
րութիւն Կիրիոնի Մովսէս ծուրտաւայ եպիսկոպոն որ  
ա[յ]ժմ ասի Գանծակ. ազդ առնէ Վրթանսիսի. իսկ նայ բա-  
զում անգամ զրեց առ Կիրիոն և ոչ լուաւ նմայ այլ հալա-  
ծեաց զՄովսէս եպիսկոպոսն: Եւ իբրև յաջորդեաց զկաթու-  
ղիկոսութիւնն տէր Արքահամ<sup>18</sup> և նայ գրեաց երկիցս և  
երիցս անգամ առ Կիրիոն. պատճառս զնէր սուտ լինել  
զՄովսէս եպիսկոպոս: Իսկ իբրև ասացաւ ժողով քննութեան  
մինել վասն այսորիկ յա[յ]տնապէս խոստովանեցաւ Կիրիոն  
գքաղկեդոնին: Յայնժամ գրեաց շրջարերական թուղթ

տէր Աբբահամ ի վիճակս իւր ի բայց կալ ի հաղորդութէնէն Վրաց և յայնմե հետէ բարձաւ ձեռնազրութիւնն Հայոց ի Վրաց:

Ի թվին Զե էր կաթողիկոս Հայոց Եզր.<sup>19</sup> գայ Հերակլ կայսր Յունաց յարևելս ի վերայ Պարսից և յաղթեալ նոցայ դարձուցանէ զիաշն փրկական զոր Խառնիայն<sup>20</sup> զաւրավարն Պարսից ի գերեխն զերուսաղեմ տարաւ զուռքը խաչն ի Պարսիկս, զոր առեալ Հերակլ և տանի կանգնէ ի տեղի իւր: Բայց ի դառնան գայ Հերակլ ի Կայոյ քաղաք<sup>20</sup> և արարեալ անդ ժողով, կոչէ ի ժողովն զեզր կաթողիկոս. և նայ զի տպէտ եր, հաւանեցաւ քաղկեդոնի ժողովոյն զի ոչ տարաւ ընդ իւր զօհոան վարդապետ Մարայ-վանեցին<sup>21</sup>, որ տեղեակ էր աստուածային զրոց և եկեալ յետոյ յանդիմանեաց զեզր, թե ընդէ՞ր տպիտարար հաւանեալ եղեր և լուծեր զբարիոք կարգաւորութիւնն, որ մինչեւ ցայս աւր ի սուրբ Գրիգորէ պահեալ էր յազգս Հայոց. իսկ նայ ոչ հաւանեցաւ, այլ հալածեաց զուրբն Մայ-րագումարեցի կոչելով. վասն զի նայ ասաց յիրաւի կոչեցար եզր, զի յեզր ելար ի հաւատոյս: Եւ զի հաւանեցաւ եզր կաթողիկոս, կայսեր ետ նմա զաղաք և գերեք մասն կողբայ զին հաւատոյն. և Զ կաթողիկոս կացին քաղկեդոնի ուսմամբն մինչեւ ի տէր Յոհանէս Աւանէցին<sup>22</sup>:

Ի թվին Ճկթ Սոլիման՝ Խսմայելացոցն իշխան<sup>13</sup> զ Պարտանդն էառ և հրամայեաց քակել զպարիսպն, և մինչդեռ քակէին գտին քար մի, յորում գրեալ եր, Ես Մարկիոն կայսր<sup>23</sup>, շինեցի զբաղաք աշտարակս զայս, յիմ զանձուց. ի վերջին աւուրս քակեացի սայ յորդոցն Խսմայելի և յիւրեանց զանձուց շինեցի. և իրեր տեսին զբարն զադարեցին և վերստին շինելոյ սկիզբն արարին:

Ի թվին Ճկթ տէր Յոհանէս կաթողիկոս ժողով առնէ ի Մանձկերտ Հայաւք և Ասորաւք և զաղանդն քաղկեդոնի բառնա յազգէն Հայոց որ սկսեալ էր ի յեզրէ. և նզովեն զիերձուածողն ամենայն և բարէկարգութեամբ բազմաւ զարդարէ զեկեղեցիս Հայոց. և ի գեկտեմբերի իեւն տաւնեցին Դաւթի և Յակոբայ, զոր այլ ազգերն ճնունդ առնենու

Էր սայ այր իմաստուն և սուրբ և գեղեցիկ տեսլեամբ. ի ներքոյ ազանէր այծենիս և ի վերոյ պճնազարդ պաճուճէր զանձն և ոսկի մանր աղացեալ փչէր ընդ ծաղկեալ ալաւք մորուսն, զոր լուեալ Աւմար ամիրապետն<sup>25</sup> Պարսից՝ կոչէ առ ինքն, զարմացեալ ընդ գեղեցկութիւնսն, որ էր ի զարդարանսն և յույժ պատուով մէծարէր զնայ և է անդամ արքունական զգեստիւք խիլայէ զնայ. և էառ նմայ հրամանական գիրս գրել երիս իրս. մին՝ զի մի ոք բռնադատեսցէ զքրիստոնէայս թողուլ գհաւատս. Բ. մի ինչ առնուլ յերիցանց և ի սարկաւազաց այլ ազատ լիցին. Գ. ուր և լիցին քրիստոնէայր համարձակ պաշտեսցեն զպաշտաւնս իւրեանց. և առեալ ի նմանէ բազում զաւրս նեծելոյ և զչուոմն որ տարածեալ էին յաշխարհս Հայոց և նոցայ փախուցեալ շտապով թաղեալ զգանծս իւրեանց, տարեալ ընդ իւրեանս զիանգամանս տեղոյն. զոր այժմ ի մերում ժամանակիս բազում զիրս բերեն ի թագաւորութէնէն և զտանեն գանծս թաղեալս:

Ի թվին ՅԼԴ թագաւորեաց Աշոտ Բագրատունի. և լինի ի բառնալոյ թագաւորութէնէն Արշակունեաց մինչեւ ի թագաւորութիւնն Բագրատայ ՆԼԴ. Այս Աշոտ և ամ իշխանաց իշխան եկաց և է ամ թագավոր և փոխեցաւ ի Քրիստոս:

Ի թվին ՅԿԲ Ուսուվ անաւրէն ոստիկան սպանանէ զ Սմբատ թագաւորն Հայոց ի Դիլին և թագաւորեցուցանէ զ Գագիկ ոմն ի տանէ Արծրունեաց զորդի Դերենկանն, այր բարի աստուածաէր, որ էր քուեր որդի թագաւորին Սըմբատայ Բագրատունոյ: Սայ շինեաց զկլղին Ախթամար ի ծովուն Բզնունեաց քաղաք թագաւորական և եկեղեցի հրաշազան:

Ի թվին ՆԻԵ թագաւորէ Սմբատ որ և նայ տիեզերակալ կոչեցաւ, սայ շինեաց զմեծանիստ պարիսպն Անոյ և հիմնարկեաց զկաթուղիկէն:

Ի թվին ՆԼԲ վաղճանի թագաւորն Սմբատ և թագաւորէ Գաղիկ եղբայր նորայ և տան նմայ ի կնութիւն զկատ-

ըամիտէ դուստր Սահակայ Սիւնեաց թագաւորին, որ կատարեաց զուրբ կաթողիկէ Անոյ:

Ի թվին Նկէ զարթեաւ աստուածասաստ բարկութիւն ի վերայ քրիստոնէից, զի ել թուրքն և յաւուրսն յայնոսիկ եկին յաշխարհն Հայոց ի Վասպուրական գաւառին կոտորէին. և իրմ լուաւ Սինայքերիմ զայլզգեացն՝ յոյժ վիրաւորեալ լինէր և քննեալ զգիրս վարդապետաց՝ իմացաւ զկորուստ երկրի, զի գրե[ա]լ էր թէ, ի ժամանակին յայնմիկ փախիցն յարենից յարենուս, ի հիւսիսոյ ի հարաւ և հանգիստ մի գտցեն: Յայնժամ Սենաքերիմ տայըր զամենայն աշխարհն Վասպուրական ի Վասիլն ՀԲ թիմափերթ տնգեղս\* բացի վաներուն. Զ վանք: Եւ էին սորայ որդիք Ե Դաւիթ, Ատոմ, Կոստանդին, Վէստ, Ապուսահե. և զգեղեցիկ որդին իւր զԴաւիթ առաքեաց ի Կոստանդինոյպալիս Ռ աղատորդով և զտէր Եղիշէ լուսատեսակն Հ կրաւնաւորաւք թագաւորական փառաւք Յ ջորի արծաթի պաղանօք, առաջի և այլ բազում զարդիւք: Եւ Վասիլն տարաւ ի սուրբ Սոփի և տար որդեգիր և ետ զՍեբաստիայ փոխան աշխարհին Հայոց բայց ի Հոռոմ վաներոյն. և զարձաւ Դաւիթ և եկն Սենաքերիմ ազգաւ և զաւրաւք իւրովք և իշխանաւք ի Սեբաստիայ և անտէր մնաց աշխարհն Հայոց և որբ:

Ի թվին ՆՂԴ եղեւ շարժ սաստիկ ի վերայ արարածոց և ընկղմեցաւ Եղնկայն. և շարժէր յամենայն աւը և զամանային ժամանակն խավար և մութն լինէր և արեգակն և լուսին ի գոյն արեան երևէին:

Ի թվին ՆՀԸ եղեւ ահաւոր նշան. ի Ե հոկտեմբերի պատառեցաւ հաստատութիւնդ և հերձաւ երկինքն յարևելից մինչեւ ի մուտս և լոյսն հոսէր յերկիր և եղեւ ահաւոր գոչիւն և խաւար երեւէին աստեղք, որ և պատմեաց Կողեռն<sup>26</sup> թէ լցաւ հազար ամ կապանաց սատանայի ի մկրտութէնէն Քրիստոսի. զի թիվս հայոց է ՆՀԸ և ՇԾԲ յառաջ լինի Ռ և Լ զԼ տուր յառաջ քան զմկրտութիւն և զՄ-ն անտի յառաջ:

\* Թերեւս՝ տեառնագեղս(?), քանի վոր պատվագիր եւ.

Ի թվին ՆՂԳ մեռաւ թագաւորն Յովանէս որ յԱնի և Աշոտ եղբա[լ]ը իւր և թագաւորեաց Գագիկ\* որդի Աշոտոյ. և զի թագաւորն Յովանէս անդարձ գրով Վասլի թագաւորի էր տուել զամենայն կալուած\*\* թագաւորութեան իւրոյ, վասն որոյ թագաւորն Գագիկ ոչ գտաւ հանգիստ ի թագաւորելն իւրում. զի թագաւորն Հոռոմ Տուկիծն զամս Բ անմարդի արար զերկիրն Հայոց. վասն որոյ կոչեն զթագաւորն Գագիկ ի Կոստանդինոպալիս և տան փոխանակ Անոյ և այլ կալուածոցն զկալաւնպաղատն և զՊիզուքան<sup>27</sup>. զի Դաւիթ Կիւրապաղատն տուել ի Հոռոմք զզաւառն Տայոց և զՈւխթիքն\*\*\* և զզաւառն Ապուհունեաց և զՄանծերոտ քաղաքն իւր, Զայսու ժամանակաւ Գրիգոր որդին Վասակայ՝ թոռն մեծի սրբոյն Գրիգորի և նայ տարեալ զբանալիս բերդին Բջնոյ՝ դնէ առաջի արքայի. տան և նմայ և առնու իւր երկիր ի Միջագետս, որպէս և Սինաքերիմ թագաւորն Վասպուրականի տար զամենայն աշխարհն իւր ի Վասիլն, այսպես և թագաւորն Գագիկ զԱնի: Եւ այսպէս վերացան Բ պսակքն ի փառաց, հայրապետութիւն և թագաւորութիւնն. և որպէս թագաւորն Կալուց Գագիկ տուել զհայրենիս իւր ի Յոյնսն՝ առնու զՄաննդա և զկառիս, զԱմասիս և զԿոստանա և այլ ի զեղոյ Ճ: Եւ այսպէս զըկեցաւ աշխարհս Հայոց ի բնիկ տերանց իւրեանց:

Ի թվին ՇԺԳ բարձան թագաւորքն Հայոց յԱնոյ որ էր վերջին թագաւոր Յովանէս, որ և յետ ի՞Դ ամի մահու նորայ Ալիսալան որ է հաւըեղբաւրորդի Տողրիլ Սուլտանին և զաւրագլուխ զաւրաց նորայ, որ էառ ի՞Դ գաւառս, և գհետ մահու Տողրիլին եղեւ ինքն Սուլտան. և զարձեալ եկն ՃՄ-աւ առ զԱխլքաղաք, և զԱմշոյտէ<sup>28</sup>, և զԱնի և Ռ այր զենու ի փոս մի և լուանայ յարիւնս նոցա, զոր ասեն թէ զոհ մեռելոց իւրոց արար զայն:

Ի թվին ՇԽԵ կատարեցաւ մարգարէութիւն տէր Ներ-

\*) Բնագրում Գուգիկ:

\*\*) Կառուած:

\*\*\*) Ա 3425 չիք զՈւխթիքն:

սիօփ և ելմն ազգն ֆուանգաց. և այս էր պատճառ ելանեւ-  
լոյն. քանզի մինչ տիրէին Սկիւթացիքն Երուսաղէմի և  
առնուլին վարձս ի մտելոցն ի սուրբ գերեզմանն, դիպեցաւ  
կոմս ֆուանդ ազգաւ զի անչափ գանեցին զնայ մինչև խլե-  
ցաւ ակն նորայ, զոր առեալ պահէր և տարեալ ի Հոռմ  
ցուցանէր: Եւ ի նախանձ շարժեալ ելանէին փառաւոր գըլ-  
խաւորք բազում գաւրաւք և եկեալ յաղթեն զնլիճաւան  
Սուլտանն<sup>29</sup>: Բ անզամ առին զնիկիայ և ետուն յԱլեքսան.  
առին զերուսաղէմ և եղին թագաւոր:

Ի թվին ՇԾ ոչ վառեցաւ լոյսն յԵրուսաղէմ յաւուր  
շարաթոյ մինչ յաւուրս կիրակէին թ ժամն և զարմացաւ  
ամենայն երկիրն և պատճառն էր անուղաղնացք ֆուանգին,  
զի զկանայն եղին ի սպասաւորութիւն Աստուածընկալ  
սուրբ գերեզմանին:

Ի թվին ՇԾԱ, Ժ աղդ քրիստոնէից թիւր զատիկ տա-  
րարին բայց ի Հայոց և յԱսորոց:

Ի թվին ՇԾԱ. Շահի արմէն տիրեաց ի Պարս և այլ  
ժի քաղաքաց. կոչեցաւ Շահիարմէն, որ ասի թագաւոր  
Հայոց. Սալտուխն եղեւ փիսայ նորայ և Ելտկուզն աթա-  
պակ նորին. սոքայ երեքեան քրիստոնէսէր և աշխարհաշէն:  
Ի թվին Ոժե անազին շարժ եղեւ և կործանեցաւ եղ-  
նկայն:

Ի թվին ՈՒԵ թագաւորն Երուսաղէմի Յ ձիաւորով ե-  
հար զՍալահատինն ի ուուն Երուսաղէմի, զաւրութեամբ  
սուրբ խաչին որ էր ՃԽՌ զաւրաւք, զի առնոյր զերուսա-  
ղէմ. ԿՌ ուղտ ջրաբեր էին զհետ նորայ. յառաջ Ուսուփ էր  
անուն նորայ:

Ի թվին ՈՂԶ վաճառականք Սալահատինն անցանէին  
ընդ Պաղեստինէ. Ն ուղտ կումաշս ազնիվս բարձել. իսկ  
կոմսն Տրապաւլի իմացոյց թագաւորին Երուսաղէմի և առ  
ի նմանէ հրաման յաւարի առնուլ. բազում անզամ խնդրեաց  
Սալահատինն և ոչ ետուն. վասն որոյ զայրացեալ գայ ի  
վերայ նորայ: Ել ընդէմ թագաւորն Երուսաղէմի ԼԶՌ-աւ  
ի դաշտին Հերմոնի<sup>30</sup>. և կոմսն Տրապաւլի նենդեաց զնայ  
և կացոյց ի յովիտ մի անջրդի և սաստիկ հարուածաւք  
յաղթեցին տաճիկք և առին զամենայն քաղաքն ծովեղերին

և զԵրուսաղէմ, բայց ոչ կոտորեաց սրով. այլ վաճառեաց  
զնոսայ զարուն ի Ժ գեկան և զէգն ի Ե և եթող զնոսայ  
գնալ ուր և կամիցին. իսկ անտարէն կոմսն որ և միարա-  
նեալ էր ընդ Սալահատինն ի Սեհ...պ սատակեցաւ:

Ի թվին ՈԽԶ թագաւորեաց կեռն այր քաջ որ յազ-  
գէն էր Ռուրինեանց ի Բագրատունի տոնմէ, յաշխարհն Կի-  
լիկեցոց. և բերին նմայ թագ յԲ-ց թագաւորեաց ի ֆուան-  
գաց և ի Հոռոմոց: Յաւուրս թագաւորութեանն\* կեռնի  
եկն յարեւլս Բ փառաւոր իշխանքն՝ Զաքարէ և Իւանէ՝  
որդիք Սարգսի բարեպաշտին և Իւանի որդոյ Վահրամա,  
որդոյ Զաքարէի, որ ի Քուրդ աղդէ ի գապիրական խելէ<sup>31</sup>  
պատուեալք ի թագուհոյն ի Վրացի Թամարայ, որ էր զուա-  
տըր Գէորգայ քաջի: Սոքա քաջութեամբն իւրեանց թափե-  
ցին բազում բերգերս և գաւառս ի թուրքաց:

Ի թվին ՈԽ առին զերկիր ի Ղաթայ:

Ի թվին ՈԽԵ առին զԱնբերդ. ՈԽԸ զԱնի:

ՈԾ զԲԾի: ՈԾԲ զԴվին: ՈԾէ զԿարս և զայլ բազում  
տեղիս: Բայց Իւանէ խարել ի թագուհուն Թամարա էղեւ  
Վրացի, և այնյաջող եղել ըմբռնեցաւ գերի ի Խլաթ և եղ-  
բաւըն Զաքարէ արիական անուամբն ազատեցաւ<sup>32</sup>, տուեալ  
զգուստը իւր ի կնութիւն Աշրաքին՝ տեառն Խլաթայ: Իսկ  
Զաքարէ եկաց հաստատուն ի հաւատն:

Ի թվին ՈԿԱ վախճանի Զաքարէ ուղղափառ հաւատով  
և թաղի ի Սանահին և մնաց տղա մի և ամսոց՝ Շահնշահ  
անուն, որ և զնա գարձոյց ի հաւատն քաղկեդոնի Խոշաքն  
կին Իւանէի:

Ի թվին ՈԿԹ Իւանէ Թաթարն ի Զին և ի Միջին աշ-  
խարհէն և զայ յերկիրն Գուգարացոց, առ զաշտայվայրաւքն  
ի կողմանց Աղուանից իբրև ԻՌ և բազում կոտորած  
արաբեալ հասին մինչև ի Տփիխ և փութով դարձան. զո-  
րոց զհետ մտեալ Լաշա թագաւոր Վրաց: Լաշա և Իւանէ պա-  
տերազմել ընդ Թաթարին, իսկ նոքա ամենայն տամբն իւ-

\* Մինչեւ այստեղ բնագիրը կազմել ենք № 3425 և 2174 ձեռա-  
գրերի համեմատությամբ: № 3425 ձեռագրից պակասող թերթերի բացը  
որպանից հետո լրացրել ենք 2174 համարով՝ մինչեւ վերջինիս ավարտը

թեանց կամեցան անցանել ընդ դուռն Դարբանդին յաշխարհն իւրեանց. և զաւք Տաճանց<sup>33</sup> որ ի Դարբանդն ոչ եւ տուն մուտ. և նոքայ հատեալ զիւռն կոտաս<sup>34</sup> ընդ անանց տեղիս գնացին, որոց էր զլխաւոր Սարաթայ Պահատուր:

• . . . [զեր]եղմանէն, ետ այրել և ի տեղոջն շուն զենել. վասնզի յուովք գնային յուխտ ի զերեզման նորա, զոր պատուեց Աստուած իջմամբ լուսոյ զերեզման նորա: Նա ոչ կարաց տանել զպատիւ հայրաւան քահանայիցն: Իսկ Սուլտանն\*\* դասնայ ի Թավրէ[զ] զինի տարո մի գայ ի Գագ<sup>35</sup> և ի Տփիխ[ս], զքրիստոնայքն զոր կոտորեաց և զոր ի կաւ հանէին, զնոյն ի Դանձակ և ի Նախչւան առնէին: Եւ ապա երթայ ի վերայ Ալատին Սուլտանին Հոռոմոց աւերէ զբաղում գաւառու. իսկ Սուլտանն փախուցանէ զնա և նա գնայ ի Մուղան: Ալատինն և Աշրաֆն և Քեմիլ եղբայր իւր կոչեն յաւզնականութիւն ի զօրուն Հայոց և ի Կիլիկեայ և ի Փուանկաց և փախուցանեն զնա մինչեւ ի Մուղան և Թաթարն փախուցանէ զնայ մինչեւ յԱմիթ և ոմանք աւեն սպանել ի Թաթարէն և այլք՝ թէ հետիոտս [փ]աղչէք և ճանաչեալ զնայ ոմն եսպան, և ինորեցաւ վրէժ արեան մանկանց անմեղաց:

Ի թվին Ոչե Սուլտանն\*\*\* էառ զեղնկայն և դկամակ և միւս տարին զկարնոյ քաղաք:

Ոչէ անհուն բազմութեամբ ելանէ Թաթարն, որ էր զլուխ զօրուն Զարմաղանն, գայ հասանէ ի Դանձակ շահաստան, առնու զքաղաքն և կոտորէ անողորմաբար: Եւ զկանայս և զտղայս գերէին և նշան աւերման նոցա երկեցաւ յառաջազոյն, զի պատառել երկիր ել ջուր սե, և ծառ մի էր սոսի զոր ճանտարի ասեն, սաստիկ մեծ, որ էր հուալ ի

\* Այստեղ Ժամանակագրությունը ընդհատվում է № 2174-ում, ուստի տեքստի շարունակությունը կազմում ենք ըստ № 3425 ձեռագրի:

\*\* Զեռազրի թերության պատճառով չի մնացել հիշյալ սուլտանի անունը. սակայն հետազա տողերում նկարագրած դեպքերը պարզ ցույց են տալիս, զոր խոսքը վերաբերում ենորեզմի թագաւոր Խալալեղնին:

\*\*\* Խոսքը վերաբերում ե իկոնիայի սուլտանին:

Քաղաքն, արջեցաւ և դարձեալ կանգնեցաւ իբրև զառաջինն երից անգամ եղեւ այն և ապայ անկաւ և այլ ոչ կանգնեցաւ\*: Եւ ապայ մտանեն ի թազաւորութիւնն Վրաց և բաժանեն զամենայն տեղիս մեծամեծաց, նուինացն և գլխաւորացն և այսպէս առ զամենայն աշխարհն\*\*:

Ի թվին ՈՉ եկ Թաթարն ի յեղնկայն ի Սոխկոտոր<sup>36</sup>:

ՈՉԵ. շարժեցաւ Եղնկայն և ի սուրբ Դրիգոր եկեղեցի փլաւ:

ՈՂԱ. Բաջու Նուինն փոխեաց զիշխանութիւն Զարմաղանին հրամանաւ Ղանին, և նայ էառ դկարնոյ քաղաք, հանել անտի զայր երմելի և զմեծատուն զպարոն Ռւմեկն և զագգականան նորա և զորդիսն և զպարոն Յոհանն\*\*\*:

ՈՂԲ. առին զշոռում նախ զկեսարիայ և ապայ զՍերգաստ և դարձեալ զեղնկան զոր անխնա կոտորեցին, զընդդիմադարձս նոցա\*\*\*\*:

ՈՂԴ. առ զԽլաթ և ետուն ի ձեռն Թամթէ, որ քոյլ էր Աւագին և տուեալ էր կին Մելիք Աշրաֆին\*\*\*\*\*:

ՈՂԸ. Կարծիս առին Բաջուն և այլ մեծամեծքն ապլուտամբութեան թագաւորին Վրաց և այլ իշխանաց և ընդ ձեռամբ ածել զթագաւորն Դաւիթ և զայլ իշխանսն կապեցին և վճիռ մահու հատին. այլ աստուծոյ խնամօքն ապրեցան ի մահւանէ: Բայց բազում կոտորւածս արարին յարուս և խայտառականս ի կանայմ\*\*\*\*\*:

Ի թվին ՈՂԹ մեռաւ Աւագ որդի իւանէ:

Զ. Շարժեցաւ խնդիր ի մեծ Պապէն ի Հոռոմայ և գրէ:

\* Հատվածն ամբողջությամբ տես՝ Կիր. Դանձակեցու մոտ՝ գլուխի իԱ:

\*\* Հմմ. անդ՝ գլ. ԻԲ, ինչպես և Մաղաքիա «Պատմ.. աղգին նեռողաց», եջ 10—11, 1870, Ս. Պ-բուրգ:

\*\*\* Հմմ. Կիր. Դանձակեցի. գլ. 34, ինչպես նաև Մաղաքիա «Պատմ.. աղգին նեռողաց», 13, 1870 թ. Պ-բուրգ:

\*\*\*\* Կիրակոս. գլ. 35. Մաղաքիան միայն աղոտ ակնարկ ունի, եջ 13:

\*\*\*\*\* Կիրակոս. գլ. Խ:

\*\*\*\*\* Կիրակոս. գլ. Խ. և Մաղաքիայ. եջ 20—21:

յամենայն ազգ քրիստոնէից, եթէ պարտ է զամենայն, սուրբ հոգին Աստուած խոստովանել ի հօրէ և յորդոյ բիենալ. և ազգն Հայոց և Վանական վարդապետն գտին զբանն համախոհ սուրբ հարցն և մերոյ սուրբ լուսաւորչին:

ԶԱ. Մարախ եկն ի վերին աշխարհն Հայոց և արար մասս յոլով գաւառաց:

Ի թվին ԶԳ շարժ եղեւ զեզնկայն և ի Սեաստ յաւուր կիրակէի ի իլ յահկի և ի ԺԱ. հոկտեմբերի հարց նոր ի քառակերպեան. յեզնկան արար մասս և մեռան ԺԶՌ մարդ: Եւ Մանկու Ղանն հրամայիալ համարել զհնազանդեալ աշխարհն. և էր համարող Արդօնն դնել հարկս ի գլխոյ արանց բայց ի կանանց ի ծերոց և ի բոյն տղայոց, և այնպէս վիշտ հասուցին աշխարհիս, զի զամենայն դուռս շահից հատին ի մարդկանէ և ինքեանք շահէին\*. և ի նոյն թվիս քրիստոսասէր արքայն Հայոց Հեթում գնաց առ Բաթու մեծ թագաւորն հիւսիսոյ<sup>37</sup>, որ էր համազգի Զանկը Ղանին, և անտի առ Մանկու Ղանն, և մեծապատիւ փառաւք հետ տարու մի գարձաւ ի տուն իւր:

ԶԴ. Մեծն Հուլայուն եղբայր Մանկու Ղանին, եկն անթիւ զաւրաւք և մեծասաստ իշխանութեամբ ի վերայ յաշխարին Պարսից, Ասորեստանեայց, Հայոց և Վրաց և Առուանից. և հրաման ետ ամենայն զաւրաց իւրոց, որոյ գլուխն Պաչուն էր, ելանել յաշխարհէ կալուածոց իւրեանց Մուղանայ, զի ինքեանք նստիցին. և նոքայ ելեալ գնային յաշխարհն Հոռոմոց, իսկ Սուլտանն փախեալ գնաց յԱլայիայ և նոքա կալան զամենայն մեջս երկրի մինչև ի ծովա տիրելով աշխարհացն ամենայն: ի սոյն ամի Հուլայու գնաց յերկիրն Մուլինետաց յԱլամութն և էաո զնայ. և ի դառնան զթագաւորն Վրաց զԴաւիթ և զիշիանս աշխարհին սիրով պատվեց\*\*:

\* № 2174 ձեռագրում Ժամանակագրությունը շարունակվում է, ըստ վորի վերսկսում ենք տեքստի կազմումը:

\*\* Ալաեղինի փախստյան և Հուլագուի դեպի Փոքը Ասիա կատարած արշավանքի ինչպես և հետազս մի շաբթ դեպքերի մասին տես Կիրակոս Գանձակեցու Ծէ, ԾԸ, ԾԹ, Կ և ԿԱ գլուխները: Այս մասին ունի նաև Մաղաքիան, եջ 26—28:

ԶԵ. Մեռաւ Բաթու մեծ կողմակալն հիւսիսոյ և որդին նորա գնացեալ ի Մանկու Ղանն, զոր միծարեաց և ետ զիշխանութիւն հաւը իւրոյ և երկրորդ իւր կոչել. և յորժամ դարձաւ յիշխանութիւն իւր, զի էր բարեկամ քրիստոնէից, և ազգականք իւր տաճկահաւատք, Բարքան և Բարքաչայն ետուն գեղ մահու և լուծին ի կենացս և սուք մեծ եղեւ քրիստոնէից: ի սոյն ամի Ղատա Ղանն երեկ ի վերա կամայ, և եղեւ սով մեծ. հաւ մի ի գեկան մի և ձիոյ խախաց մի ի Խ սպիտակ, զի եկեալ տէր Սարգիս և յամենայն ամրոցաց ենան:

Ի թվին ԶԵ քաջն Հուլայուն առ զՊաղտատ զոր շինեալ է Զաֆր Խսմայէլացի և էր շինութեան նորայ ՇԺԷ ամ. և էր քաղաքն ի վերայ Տիգրիս գետո, հեռի ի հին Բարելոնէ և աւուր: Եւ սպան զԽալիֆայն\*: ինոյն ամի առաքեաց Հուլայունն զաւրս ի վերայ Մուֆարղնայ և խսարեցին զքաղաքն Բ ամ և սաստիկ նեղեալ ի սովոյ կերան զմիմեանս զի լիտր մի մարդոյ միս ի Ճ գեկան եղեւ:

Ի թվին ԶԲ առին զՄուֆարղին:

Ի թվին ԶԸ էաո Հուլայունն զՀալպ, զԴմբշխ, զՀամս, զՀամայ, առին և զՄերտին:

Ի թվին ԶԺ Սըրդաւնն եսպան զբարեպաշտ իշխանն զտէրն Խաչենոյ զԶալալն: ի նոյն ամի սպանին ի դուռն Հուլայունին զմեծ ըսպարապետն Վրաց Զաքարէ զորդի Շահնշահին:

Ի թվին ԶԹ Սուլտանն մսրայ կոտորեաց զաւրս Թաթրին որ էր գլխաւոր Քիթպուղան:

Ի թվին ԶԺԳ Սարգանին որդին Շահպատինն զԼարդան վարդապետն տարաւ մաստ ի Հուլայունն, և մեծաւ սիրով պատուեաց զնա Ղանն և բազում բանս իմաստութեան հարցաւ ընդ սուրբ վարդապետն<sup>38</sup> ի նոյն ամի երկեցաւ ազաւոր աստղն յաւը Վարդավառին, որ եղեւ նշան մահու Հուլապունին:

Ի թվին ԶԺԴ մեռաւ Հուլապունն:

Ի թվին ԶԺԵ Սուլտանն Մորայ Ցնդուխտարն, աւեւ

\* Այստեղից գըված ե ուրիշ ձեռագրով, նոյն 14-րդ դարու բուրագրով:

ըեց զաշխարհն Կիլիկեցոց և զորդիսն Հեթում թագաւորին զԹորոսն սպանին և զԼեռնն գերի վարեցին: Ի նոյն ամի փոխեցաւ ի քրիստոս սուրբ կաթողիկոսն Հայոց տէր Կոստանդին, և պարոն Ումեկն ի Տփխիս:

Ի թվին ԶԺԷ նստի կաթողիկոս Հայոց տէր Յակոբ, որ եր վարդապետ լի ամենայն գիտութեամբ: Ի սոյն ամի Ապաղայն յաթոռ հաւը իւրոյ նստաւ: Ի սոյն ամի Թաքութարն ապստամբէ և մտանէ յերկիրն փոքր Դաւթի թագաւորի Վրաց և ըմբնոփ յԱպաղայէն:

Ի թվին ԶԺԸ հիմն արկանէ արքեպիսկոպոսն Եղնկոյ տէր Սարգիս գեղապանոյց տաճարին սուրբ փրկչին:

Ի թվին ԶԺԹ ի հոկտեմբեր Ի՞ հանգեաւ ի Քրիստոս թագաւորն Հայոց Հեթում և թաղեցաւ ի Դրագարկն:

Ի թվին ԶԻ Ապաղայն մտանէ ի Խորասան և յաղթէ զՊարախն: Ի նոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս սուրբ վարդապետն Վարդան: Ի սոյն ամի վախճանեցաւ թագաւորն Վրաց Դաւթի:

Ի թվին ԶԻԱ Դեմետրէ որդի Դաւթի նստի թագաւոր Վրաց:

Ի թվին ԶԻԲ յայտնեցաւ նշխարք սրբոյն Ներսիսի ի Թիւն:

Ի թվին ԶԻԳ կատարեցաւ գմբէթ սուրբ փրկչին և եղ տէր Սարգիս վխաչն ի վերայ գմբէթին:

Ի թվին ԶԻԴ զսարայն ետ շինել Ապաղայն ի դաշտն Առանայ: Ի սոյն ամի Կործանեաց շարժն զԱրձեշ, զՄլաթ և յերկիր նոցա բազում մխաւք եղեն: Ի նոյն ամի հրաման ել յԱպաղայէն ջնջել զխաւսաւզ հաւան<sup>39</sup>: Ի նոյն ամի Մսըրցին ի Կիլիկէ ենուտ և բազում աւերմունս արար:

Ի թվին ԶԻԵ սպանին զսուրբ եպիսկոպոս զտէր Սարգիս և զիմաստուն որդի նորա զպարոն Յոհանէս, աղուհացիցն միջնոցն հինգարթին, և այլ լ.լ ոդի լնդ նոսա: Ի սոյն ամի Ֆնդուխտար սուլտանն Մսրայ Կոտորեաց զաւրս Թաթրին, որոյ զլխաւորք էին Թաւտան պահատուրն և Թօխու նուինն. և եղև պատերազմն ի դաշտն Ապլասթախն<sup>40</sup>: Զայս լուեալ

Ապաղայն շարժեցաւ ի բարկութիւն, և ի թվին ԶԻԶ առաքեաց զեղբարս իւր զՄանկու Տամուրին և զՂաւնղրաթայն և զԹնքչին բազում զաւրաւք յաշխարհս Հոռոմոց: Յետ ամւոյ մի գայ և ինքն Ապաղայն և հասանէ մինչ յԵղնկայն և մտանէ յեկեղեցին, զոր էր շինեալ տէր Սարգիս, և բազում զթով հարցանէ զպատճառ սպանման տէր Սարգսի, և պատուեալ մեծարէ զթուռնս նորա, և գնայ մինչ յԱպլասթայն և տեսանէ զկոտորումն զաւրացն և ի հիացման մեծի եղեալ և լոււաւ թէ զաւրք Պարքային մերձ են անցանել ընդ դուռն Տարպանդին փութով դարձաւ յաթոռ իւր:

Ի թվին ԶԻԾ սպանին զՃրապիզաւնու թագաւորն զԳերիաւրկն<sup>41</sup>, զի մատնեցին Ապաղային՝ մայրն և քեռիքն իւր: Սպանին և զՂաւրի աթապակն: Մեռաւ և Ֆնդուխտար սուլտանն Մսրայ և նստաւ Ալֆին:

Ի թվին ԶԻԹ Ապաղայն ի Վրաց տուն մտաւ և զՃալալ Թաւրայն և զԹաթի պապան<sup>42</sup> սպանին ի Քայիթուն լեառն<sup>43</sup> որ է ի աահմանս Անոյ:

Ի թվին ԶԼ վախճանի թագաւորն Կոստանդնուպալսի Միխաիլ Պալելաւաւսն. և առնու զթագաւորութիւնն որդի նորա Անդրոնիկոս: Ի նույն ամի եղբայր Ապաղային Մանկու Տամուրն և Հուլչուն, Ալխախ Պահատուրն և Դեմետրէ թագաւորն Վրաց և մեծամեծ իշխանքն Հայոց որ յարելս և թագաւորն Հայոց Լեռն, անհուն զաւրաւք գնան ի պատերազմ ի վերայ Մսրայ. և սուլտանն Ալֆիզայ ընդդէմ նոցա բազում զաւրաւք. և լինի պատերազմ ի մեծ դաշտն Համսայ. ընդառաջն քաջապէս պատերազմեցան զաւրք Թաթարին բայց յետոյ փախստական եղեն:

Ի թվին ԶԼԱ մեռաւ Ապաղայ Ղանն զեղով մահու ի Հեմիան, նոյնպես և եղբայր նորա Մանկու տամուրն, և եղև այս նենգութեամբ Մահիպ տիւանին:

Ի թվին ԶԼԳ եսպան Ահմատն զեղբայր իւր զՂաւնղրաթայն և այլ մեծամեծ մուզունի և Վրացի պարոնայք: Ետ սպանանել և զՂիաթատին սուլտանն, զորդի Ըոռուդնատինին ի յԵղնկայն և էառ զսուլտնութիւնն Մասուտն, որդի

յԱզատինին։ Եւ լինի պատերազմ ի մէջ Ահմատին և Արդաւնին և զաւրացեալ Արդաւնն առնու զաթոռ հաւը իւրոյ Ապաղախն։ և սպանանեն զԱհմատն և հաստատի Արդաւնն Ղան։ Ի նոյն ամի առաքէ Արդաւնն գեղբայր իւր զՔայնդրաթայն և զհաւըեղբայր իւր զՀուլաչուն յերկիրն Հոռոմոց։

Ի թվին ԶԼԴ թագաւորն Հայոց Լևոն գայ յարևելս առ Արդաւն Ղանն և բազում մեծարանաւք սիրեաց զնա, էր և անդ սուլտանն Հոռոմոց<sup>44</sup>։ Եւ զարձաւ թագաւորն Հայոց Լևոն յաթոռ իւր. և յորժամ եմուտ յերկիր իւր վախճանեալ էր կեռանէ թագումի իւր։

Ի թվին ԶԼԶ փոխեցաւ ի քրիստոս սուրբ կաթուղիկոսն Հայոց տէր Յակոբ. և նստաւ յաթոռն տէր Կոստընդին Պրունգործն։ Ի սոյն ամի վախճանեցաւ թագաւորն Հայոց Լևոն և նստաւ յաթոռն որդին իւր Հեթում։ Ի սոյն ամի եղարկ հարամին զԶառայ<sup>45</sup> և տարաւ գերիք և եսպան բազում քրիստոնէք։ Ի սոյն ամի ի մայիս Զ եղև շարժ մեծ յԵղնկայն և բազումք մեռան զորոյ թիւն Աստուած միայն գիտէ։

Ի թվին ԶԼԷ սպանին զՉնքսանպուղայն, զԶողկապն և զԹաղա Տամուրն։ Ի սոյն ամի էաո Ալֆի սուլտանն զՏրապաւլիս, յապրիլ Ժէ։

Ի թվին ԶԼԸ սպանին զՀուլաչուն, զԽարանաւխայն և այլ բազումք։ Ի սոյն ամի աքսորեցին զկաթուղիկոսն Հայոց զաէր Կոստանդին Պրունգործն, և նստաւ կաթուղիկոս Հայոց տէր Ստեփանոս Հոռոմայեցին։

Ի թվին ԶԼԹ. մեռուցին դեղով զԱրդաւն Ղանն և զԶհում սահիպ տիւանն և այլք։ Ի սոյն ամի մեռաւ Ալֆի սուլտանն Մսրայ և նստաւ յաթոռն Մելիք Աշրաֆն։ Ի սոյն ամի ի մայիս ԺԸ էաո զԱքայ Մելիք Աշրաֆն։ Ի սոյն ամի նստաւ յաթոռ զանութեան Քայիսիաթուն, եղբայր Արդաւնին։

Ի թվին ԶԽ Ժ ազդ քրիստոնէքն ծոկցան ի սուրբ զատկէն. բայց Հայք և Ասորիք ուղեղ կացին, և կաթուղիկոսն տէր Ստեփանոս և թագաւորն Հայոց Հեթում ընդ Յոյնք արարին զատիկ յապրիլ Զ. և պատճառն էր այս. զ

բազում հնարիւք ջանային զի միաբանութիւն լիցի ընդ Յոյնք և ոչ կարացին։ Բայց ի Կեսարիոյ մինչև յարկելք ուղեղ արարին զզատիկն յապրիլի ԺԳ։ Ի սոյն ամի առին զՀոռոմկլայն և գերի վարեցին զկաթուղիկոսն Հայոց զտէր Ստեփանոս հանգերձ ամենայն ուխտիւ եկեղեցոյն։ Ի սոյն ամի զնաց Քայլաթուն ի Տոնդողլու և բազում աւերմունս արար։

Ի թվին ԶԽԱ երեկ հարամին ի Սեաստ ի նոյեմբեր իլ և զքաղքին դրուցմն գերեց և տարաւ գերի Պ և ի քրիստոնէիցն եսպան ոգիք իբրև Ծ։

Ի թվին ԶԽԲ դարձեալ եկն հարամին ի Սեաստ ազուհացիցն և եմուտ ի ներքս ի քաղաքն և աւզնականութեամբն Աստուծոյ և սրբոց քառասնիցն յարապն որդի Սամաղարին հանգիպեալ ի քաղաքն և կոտորեաց ի նոցանէ ՇԿՅ անձն և զիակոյտ արարեալ իբրև զբլուք մի մեծ ի վերայ ճանապարհին Մելիքինոյ և զայլսն փախստական արար։

Ի թվին ԶԽԲ նստաւ կաթուղիկոս Հայոց տէր Գրիգոր վարդապետ. էաո և Մելիք Աշրաֆն զՊեհեստնի<sup>46</sup>։ Ի սոյն ամի սպանին զՄելիք Աշրաֆն և յայսմ հետէ եղև սկիզբն նըւազութեան իսմայելացւոց, որը ինքեանք զամս զայս խասած կոչէին։

Ի թվին ԶԽԳ սպանին զՔայլաթուն և զԱխալուղայն և այլ բազումք։ Եւ նստավ Պայտաւն Ղան, որ եկաց յաթոռն ամիսս Զ, յապրիելէն մինչ ի հոկտեմբեր։

Ի թվին ԶԽԴ եսպան զՊայտաւն Խաղանն և ինքն նստաւ յաթոռն և եհան հրաման ի ձեռն նաւուալիցին և Ստորատին սահիպ տիւանին, քակել զամենայն եկեղեցիս քրիստոնէից և զպաշտաւնեայս նոցա ի սուրբ մատնել. զի ի հաջողերյն Աստուծոյ Հեթում թագաւոր Հայոց անդ պատճեալ շիջոյց զսիրտ Խաղանին և անցոյց զբարկութիւն ի քրիստոնէից։ Ի սոյն ամի սպանին զԱսլան Քայլաթուն և զԹաղաչարն ի Սեաստ։

Ի թվին Զիե եկն Խութլուշայն ի Հոռոմք և կոտորեաց ի դաւրացն Պալթաւին և ինքն փախստական արար մինչև ի Կաւք<sup>47</sup> Աշբաֆին: Ի սոյն ամի թագաւորն Հայոց գնաց ի Կոստանտինուպաւլիս Հեթումն, և նստաւ յաթոռն Սըմբատ. և ըմբոնեալ զՊալթօն և զորդի նորա զՔարաթն և առաքեաց առ Խաղանն, որ և յետոյ ինքն գնաց առ Խաղանն:

Ի թվին Զիօ սպանին զՊալթօն և զՔարաթն ի Թավրեժ և եկին ի Հոռոմք դլխաւորք Պայանչարն, Սուլամին, Ապըշխայն, Թողուղ, Տամուրն: Ի սոյն ամի դարձաւ Սմբատ թագաւորն ի Խաղանէն\* և եկն ի Սեսատ և լւաւ եթէ եղբայր իւր եկեալ է ի Կոստանդինուպոլսէ ի Սինօպն և կամէլ գնալ առ Խաղանն և ընթացաւ դհետ նորա և ըմբոնեաց զՀեթում և զԹորոս և տարաւ կապանօք ի Կիլիկէ: Ի սմին ամի Տնդինն կըսէր եղբայրն Հեթումոյ ոչ համբերեաց չարեցն զոր գործեր Սմպատ.յարոյց ի վերայ նորայ պատերազմ և Սմպատ յառաւել չարութէնէն ջանայր աքսորել զտէր Գրիգոր կաթուղիկոս Հայոց և ոչ եղիտ պատճառս. ապա տայր սպանել զԹորոս եղբայր իւր և զՀեթմոյ զմիւտ եղբօրն դաշն ենան, և ինքն փախստական անկանէր ի Հոռոմք առ Պայանչարն և Պայանչարն կապանօք դարձոյց գնայ առ Հեթումն և նայ ոչ հատոյց նմայ չար փոխանակ չարի, և թագաւորեցոյց Հեթում զՏնդին եղբայր իւր:

Ի թվին Զիե ապստամբեաց Սուլամին և եսպան զՊայանչարն, զՊիշխուրն, զԹօխուղ Տամուրն և ջանայր աիրել Հոռոմոց զոր լւեալ ի Սեսատ՝ ոչ հնազանդեցան նմայ, ամրացուցին զպարիսպն և պատրաստեցան ի պատերազմ ընդդէմ նորա՝ ապաւինելով յԱստուած. և ի մարտի Ը աղուհացիցն առաջին կիրակէն եղբայրը՝ Սոյլամիշին, Պուղաղուչին, եկեալ ի վերայ Սեսատ և զաւուրս Խ պատերազմ մէլ ընդ քաղաքն, մինչեւ յաւագ ուրբաթի օրն, զոր և յե-

տոյ ինքն եկեալ բազում զօրօք և ազգի ազգի հնարիւք և ունգլուք և ոչ կարացին յաղթել քաղաքին, զի Աստուած փրկեաց զքաղաքն. և գնացեալ ի դաշտն Ախշարին<sup>48</sup> և կոտորեցան ի Բաշխկերտէն և ի Զոպանէն և ինքն փախեալ յԵգիպտոս:

Ի թվին Զիէ Սուլտանն Մսրայ Լաչին եկն բազում զօրօք յաշխարն կիլիկեցոց և բազում աւերումն գործեաց և անթիւ յամուրս բերգիցն մեռան ի սովոյ և ի ջրոյ: Ի սոյն ամի նստաւ յաթոռ սուլտանն Ալատինն ի Հոռոմք. ի սոյն ամի ի սուրբ Յակոբին պահուցն եկն Նօխա խանն ի վերայ քաղաքին Սուրղաթայ և գերեաց զամենեսեան և ի սաստկութենէ ձեանն և ցրտոյն մեռան ոգիք աւելի քան զԺե՛թ: Ի սոյն ամի ըմբոնեաց Հեթում թագաւոր Հայոց զՃնդինն, հրամանաւ իշխանացան:

Ի թվին Զիէ եկն Սուլամին ի Շամէն ՌՄ մարզով, զոր հասեալ թագաւոր Հայոց Հեթում ի վերայ և զզօրսն կատարեաց և զինքն ըմբոնեալ ետ տանել առ Խաղանն և անդ սպանին: Ի սոյն ամի հանին նոր դրամ յաշխարհին Հոռոմոց՝ յանուն Խաղանին և զսուլտանի դրամն խափանեցին:

Ի սոյն ամի եմուտ Խաղանն բազում զօրօք յաշխարհն Մսրայ և բազում աւերումն գործեաց և դարձաւ յաթոռ իւր:

Ի թվին Զիթ դարձեալ եմուտ Խաղանն բազում զօրօք ի Մսր և գլխաւորք էին դհետ նորա Շահնշահն ի Վրաց Կօկաթայն, սուլթան Մուլայն, Զօպանն. և բազում աւարս և գերիս առեալ տարաւ և չոդաւ յաթոռ իւր: Ի սոյն ամի եղի սով սաստիկ յաշխարհն Հոռոմոց ևս առաւել ի Սեսատ...:

\* № 2174-ում ընդհատվում և ժամանակագրությունը. հետագա տեքստը շարադրում ենք ըստ № 3425 ձեռագրի:

## ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> Մովսես Բ. Կարողիկոս Յեղվարդեցի—574—604 թ. թ.: Մովսես Յեղվարդեցու անվան հետ և կապված Հայոց տոմարի և Հայոց թվականության կարգավորման խնդիրը: Սրա ժամանակ ճշտվում է տօմարը, և Անդրբաս Բյուզանդացու 200-ամյակի սպառման պատճառով սկիզբ է դրվում առանձին Հայոց թվականությանը:

<sup>2</sup> Խոստով Ա. Ծուշիրվան—թագավոր Սասանյան Պարսկաստանի, 531—579 թ. թ.:

<sup>3</sup> Յուսիհանոս կամ Յուսիհանոս—Բյուզանդական կայսր (565—578), տարեգիրը շփոթում և և Յուսիհանոսին և վերագրում Ս. Սոփիայի յեկեղեցու կառուցումը, այդ յեկեղեցին կառուցել և տվել Յուսիհանոսի նախորդ Յուսիհանոս կայսրը (527—565):

<sup>4</sup> ա. Հայոց թվագրության սկիզբը վոչ թէ ՇՄԴ (554) այլ ՇՄԲ (552) թվականն եւ: Այստեղ հավանաբար սիստ արտադրության արդյունք եւ, տարեգիրը եջ 17-ում արդեն ճիշտ և նշում հայել տարեգը: սկիզբը ՇՄԲ (552) թվականը:

<sup>5</sup> Անդրեաս Բյուզանդացի.—սա նիկեական ժողովի վորոշմամբ կազմեց մի տոմար զատիկը ճշտելու համար: Հաշվելով 353 թվից՝ նա կազմեց 200-ամյա մի շրջան, վորով և կարգավորվեց քրիստոնյաների զատիկը: Այս 200-ամյա ցուցակն ավարտվեց 552 թ., ըստ վորում զատկական հաշվեկերը չելին համընկում Անդրեասյան հաշվեկերին: Թեև այս շփոթությունը վերաբերում էր ընդհանրապես քրիստոնեական բոլոր յեկեղեցներին, սակայն Մովսես կաթողիկոսը Հայկական նոր թվագրություն և սահմանում և այդ Հայոց թվագրությունը սկիզբ և առնում սույն Անդրեասյան ցուցակի սպառումից: այսինքն՝ 551/2 թվականից...

<sup>6</sup> «Սատանայեան ազգն Պարսից»—ակնարկում և Սասանյանների դինաստիան:

<sup>7</sup> Մադիամ.—ըստ յեկեղեցին Մադիամ, վոր ծննդավայրն և Մուհամմեդի, ուստի և մահմեդականների ուխտատեղին: Հիմք չկա Մազլիամը նույնացնելու Մագիանի հետ:

<sup>8</sup> Կեդար.—կեդարացիների նախահայրը, ըստ ավանդության, յե-

ղել և Խսմայիլը վորը ծնվել և Արքահամի և վերջինիս աղախին հազարի կենակցությունից: Ըստ այսու կեդարացիները հանդիսանալով արաբական ցեղերից մեկը՝ ապօռում ելին արաբական անապատում, նարաթացիների մոտ: Յերբեմն այս ժողովրդի անունով անապատը կոչվել է կեդարու անապատու:

<sup>9</sup> Արիսու—Նշանավոր աղանդապետ և հիմնադիր արիստականության: Արիսու մերժում եր Քրիստոսի աստվածային բնությունը, նա պնդում էր, թէ Քրիստոսը սոսկ մի արարած է սրեղծված վաչչից, իսկ Քրիստոսի աստվածության կարողությունը հետեւանք և Արարչի հաղորդությամբ միայն...:

Ըստ յեկեղեցին արիստականությունն իր արձագանքներն ունեցել և նաև հայատանում:

<sup>10</sup> Այստեղ և Սարգս Միայնակեցի և Մահամեդի հանդիպման պատմությունը նման և Վարդան Բարձրբերդցու նկարագրածին: Հմտակ 88, 1861 թ., Մոսկավ:

<sup>11</sup> Վրաց և Հայոց յեկեղեցիների բաժանումը զուգադիտել և Մովսես Յեղվարդեցու վերջին տարիներին, յերբ վրաց կյուրին կաթողիկոսը գաճն և բարձրանում (598 թ.): Կյուրինը հայտնապես դնում է վրաց բաժանման խնդիրը և իրականացնում և այն հակառակ Մովսեսի տեղապահ Վրթանեսի և Արքանամ Աղբաթանեցու նախազգուշացումներին և սպառնալիքներին:

Վրաց և Հայոց յեկեղեցիների բաժանման մանրամասն պատմությունը տալիս և Ուխտանես պատմիչը:

<sup>12</sup> Կյուրին.—վոր և կյուրին կաթուղիկոս Վրաց, տես ծանօթ. 17:

<sup>13</sup> Կողմանիա—Տայքի շրջանում, իսկ ըստ Հռոմեական բաժանման Յերբորդ կամ Փոքր Հայքում: Կողմանիա գավառում այս անլամբ հայտնի և նաև մի քաղաք:

<sup>14</sup> Նիկաուլիս—գյուղ Կողմանիա գավառում: Աշխարհագրագետները վորմանք նույնացնում են Շապին-Դարա-Հիսարի հետ. (տես. Ի. Պատ, Աշխարհագրություն, հատ. Ա. 326):

<sup>15</sup> Գայլ գես—Յերգնակայի մոտերքում, գեսի հարավ-արևմուտք Յեփրատի մեջ թափիղ գետակներից: Գայլ գետն սկիզբ և առնում Փոքր Հայքից: Հույները կոչում ելին լիբոս=Գայլ: անցնում և Բարձր Հայքի Յեկեղյաց գավառից: Այս գետը հիշվում և նաև Աղբաթանկեղոսի մոտ յերկու անգամ, վորտեղ և գրլում և Յերիգավանի մոտերքը: Այժմ կոչվում և Զարտագ-սու, Զարտագի սոսրուներից բղիկու համար:

<sup>16</sup> Խուժիկ յեպիկոպոս.—վոր և կիս: Ըստ Ուխտանեսի՝ Խուժատատանցի, իսկ ըստ ժամանակագրի՝ Կողմանիա գավառի Զաւտառու գյուղից: Կյուրինի վրացու ուսումնակիցը նիկուղությունը: Հաբել և Նեստորական աղանդին Յեղել և նաև Կյուրինի վործակեցը՝ վերջինիս Վրաց կաթողիկոս յեղած ժամանակ և սրանից ել ձեռնադրվել և յեպիկոպոս 599 թվին:

<sup>16</sup> Զուտալի.—ըստ Ուկտանեսի՝ Զուտարիմա (Բ. 3.): Թէ Ուկտանեսը և թէ ժամանակագիրը դնում են նիկոպոլսի մոտ:

<sup>17</sup> Վրանես Քերպար—տեղապահ Մովսես Յեղվարդեցու՝ յերբ վերջնա հասել եր խորին ծերության, այն ե՝ 581 թվից: Մովսեսի մահից հետո վորոշ յեպիսկոպոսներից առաջադրվել ե հայրապետության թեկնածու, սակայն Սմբատ Մարգարանի միջնորդությամբ կաթողիկոս ե ոծվում Արքահամ Աղբաթանեցին, փորի ժամանակ ևս Վրթանեսը մնում և անդապահ աթոռակալ: Վրթանեսը մինն ե այն պատգամավորներից, վորոնց 597 թ. Աղբաթանեցին ուղարկում է Կ. Պոլիս ներկա լինելու Մորիկ կայսեր հրամանով գումարված կրոնական ժողովին, վորտեղ պետք ե քննչեր Կյուրիոնի բողոքը, վոր արքած եր Մորիկին՝ Արքահամ Աղբաթանեցու առ Կյուրիոնի արված նորովքի կապակցությամբ:

Վրթանեսը, ինչպես և մեկ ուրիշ հայ պատգամավոր՝ Գրիգոր Վարդապետը, գեմ են քվեարկում հիշյալ ժողովի դրոշումներին, վորոնք բղիսում երին Քաղկեդոնական դավանանքի փողուց:

<sup>18</sup> Արքահամ Աղբաթանեցի.—կաթողիկոս 607—615 թ. և հաջորդը Մովսես Յեղվարդեցու:

<sup>19</sup> Ցեղ կարգիկաս.—(Փառաժնակերտացի)՝ 630—641. Քաղկեդոնականությանը համակրող կաթողիկոսներից թերևս ամենաականագոր, վորի համար ել զատապարտվել ե հայ պատմիչների կողմից (Սեբես և յետինները): Սակայն Յեղը Վարապտերոցի ընտրելին ու գործիքն եր:

<sup>20</sup> Խառնեայն զրավար.—Խոռենամ Շահրվարազ պարսից զորավարը, վորին ավանդությունը վերաբրում ե խաչափայտի տեղափոխությանը Յերուսաղեմից:

<sup>21</sup> Կայսր Կայակ Կամ Կայնոպոլիս.—Հնում նաև այդպես են անգանել Վաղարշապատ քաղաքը. տարեկը հիշատակած ժողովը Վաղարշապատում չի յեղել, յեթե արտագրողները (գրիչները) արտագրելու ժամանակ սխալմամբ Կարնո քաղաքի փոխարեն չեն գրել Կայսր քաղաք, ապա տարեկը ը շփոթում ե հիշատակած ժողովի վայրը. այդ ժողովը յեղել ե Կարնո քաղաքը:

<sup>22</sup> Յանան Մայրագումեցի կամ Մայրագանեցի—վորը Վարդված եր Դիմինի այսը յեկեղեցու փակակալ՝ Յեղը կողմից, յերբ վերջինս գնաց Հելակ կայսեր հրամերով ներկա լինելու Կարնո ժողովին, վորտեղ և համաձայնվեց ընդունել Քաղկեդոնականությունը Այդ իսկ պատճառով վերապարձին Յոհան Մայրագումեցին չգիտավորեց Յեղը: Վերջինս իր մոտ կանչելով Յոհանին՝ ապատկում և գտնում ե յեկեղեցուց, վորից հետո Յոհանը քաշվեց Մայրո վանքը, և վորի համար Յեղը Մայրո վանքը հեղնաբար կոչեց Մայրողում. իսկ այնուհետև Յոհանը ստացավ Մայրագումեցի անարդական մականունը:

1912 թ. Կաբառեա Տ.—Մկրտչյանը «Շողակաթ»-ում ապացուցեց,

վոր Մանդականուն վերագրված մի քանի գլխավոր հառերը Մայրագումեցու գրչից են յեկել վորոնց մասին արդեն հիշատակություն կարպատմիչների մոտ:

<sup>23</sup> Յանան Ունեցի.—կաթողիկոս 717—728 թ. թ. Լոռվա արջանի Ունեցու գյուղից: Հայտնի և նաև նմատասեր մականունով: Աշակերտել ե Թեոդորոս Քրիստոնակություն: Ունեցու Դամակոս գնալու և Ոմարի հետ ունեցած տեսակցության մասին խոսում են մեր պատմիչներից նաև Դրասեանակերտցին, Կիրակոսը և Բարձրբերդցին:

Ումարին կատարած իր հիշյալ այցելության ժամանակ կարողացավ ձեռք բերել վորոշ արտօնություններ յեկեղեցականների համար:

<sup>24</sup> Սուլեյման.—խալիֆ Դամասկոսի Ումայան տան (715—717): Դարրանդի պարսպի քանդման ու վերակառուցման մասին պատմում ե նաև Ղենդը, վորից անշուշտ ողավել են հետագա պատմիչները: Սակայն Ղենդի մոռ այդ արշավանքի դեկավար զորավարն ե Մուլիմը, և վոչ թե ինքը Սուլեյման խալիֆը: Հաս Ղենդի Մուլիմի այս արշավանքը տեղի ե ունեցել Սուլեյման Ազգի-Մելիքի խալիֆայության 2-րդ տարիին:

<sup>25</sup> Մարկ կամ Մար:—ամերական Դամասկոսի (717—720 թ. թ.): Մարն ե այցելել Յոհան Ունեցին, վորից և ձեռք բերել ժամանակացի հիշած մի քանի արտօնությունները, և վոր այդ առթիվ հիշատակություն ունեն նաև ժամանակակից և հետագա մյուս հայ ժամանագիրը:

<sup>26</sup> Կապեն, Հավիաննես:—Տարբանացի, 11-րդ դարի խոզոր հայ գիտնականներից մեկը: Ժամանակակիցները կողենի մասին խոսում են զօվատավ, այսպիս Ուռայեցին՝ այցը ճգնազգեաց և բանիբուն հունականում կամ՝ տակար բանին և մեծ գիտութեամբ բացայայտեր զգիտաթիւն զրոց: Սուլամակի գոլիստաներ ունի Կողենի հասցեյին նաև Արքստակես Լաստիվեացին: Հիշատակություններ կան, վոր Կողենը գրել ե Տոմարի մեկնություն և մի ուրիշ տամարական աշխատանքյուն, Անանիա Վաղարշակերտցու խնդրանքով. Կողենի անունով հիշում ե նաև պատմական մի զրվածք, վոր գետ անհայտ ե: Մեզ հասած գործերի մեջ ամենից ամբողջականն ե «Տեսիլը»:

<sup>27</sup> Կալանապալատ յեկ Պիգամա:—այս անունների անդը գեռս ճշորեն պարզված չե, սակայն յենթադրվում ե լինել կեսարիայի նահանգում, ուր գանվում երին Գադիկ Կարսեցուն արված Մամնդավ, և Խալիֆատաները կալվածները:

<sup>28</sup> Ամենյիե:—պետք և լինի Շամշոյլտե անվան աղավաղումը, վորը ցուց են տալիս կիրակոս և մյուս պատմիչները:

<sup>29</sup> Խղինավան սուլթան:—գուցե աղավաղումն ե Ղլիճ Արսանի, վորը իկոնիայի սուլթան եր ժի՞ զարում: Սա ընդհարումներ ե ունեցել

գոչ միայն խաչակիրների, այլև Կիրիկյան հայերի նորակազմ իշխանության հետ, յերբ էշխում եր Թորոս իշխանը, վորից ծանր պարտություն կը եղ 1552 թվին:

<sup>30</sup> Հերմենի դաշ.—կոչվել ե Հերմոն լեռան անունով, վորը մասն է կազմում Անդի—Լիքանանի լեռնագոտու։ Այդ գագաթը կարծիում ե լինել այժմյան ձեպել-եց Շեյխ, վորը Ասորիքի ամենաբարձր գագաթն է, ծովից մոտ 3300 մետր բարձրությամբ։

<sup>31</sup> Գագերական խել—Զաքարյան տոհմի ծագման այս վերսիան նոր ե, և մինչև այժմ բանափրությանը հայտնի ե յերկու ցուցմունք. «Բաբերական խելե» (Կիրտկոս) և «Բաբերական խելե» (Առաքել) Ուսումնակարողներից վոմանք համարելով Ասորելի ցուցմունքը Կիրակոսի «Բաբերական» բառի աղավաղումն՝ կարծում են, վոր Զաքարյանները այնպես, ինչպես բառացի ասում ե Կիրակոսը, ունեն բըդական ծագում, «Որ հատուածեալ ի Քրդաց ի բաբերական խելեն...» (Գլ. բ.)

Մինդամայն հակառակ կարծիք ե հայոնել Ա. Շահնազարյանը. Զաքարյաններին նվիրած իր ուսումնասիրության մեջ (տես «Ծողակաթ»), ցույց տալով վոր այս տոհմի նախնիքը գաղթել են Հայաստան Միջագետից և կատ չունեն քըդերի հետ. Այստեղ չվիճարկելով Զաքարյանների ցեղական ծագման խնդիրը՝ կավելացնենք միայն, վոր մեր ժամանակարի ցուցմունքը մոտավորապես ճշտում ե Զաքարյան տան ներգաղթի ուղղությունը հաստատում ե Ա. Շահնազարյանի տեսությունը։

<sup>32</sup> Այստեղ ակնարկում ե Սպասարանների կողմից Խլաթի պաշարման դեպքը, յերբ Իվանեն գերի ե ընկնում Եյուրյանների ձեռքը՝ քաղաքի բերդի շուրջը կատարած պատութի ժամանակ։

<sup>33</sup> Զաւրէ տանաօց.—անտարակույս պետք ե լինի «Զաւրք Տաճկաց» քանի վոր Կովկասյան հին ժողովուրդների ցանկում չենք հանդիպում այդ անվան։ Սա գրչագրական սիրալմունք է, վոր ուղղելի ե Կիրակոսի միջոցով (տես՝ Կիրակոս, Գլ. թ.)։

<sup>34</sup> Կոտսա—նույնպես գըշագրական աղավաղումն է կովկաս անվան։

<sup>35</sup> Գագ լեռ.—Գուգարքի Կողբացիոր գագառի Դագայ գաշտում։ Համանուն վայրում նշանափոր ե Գագայ բերդը, վորտեղ պատմական տարբեր ժամանակներում իշխան են Աղվանից թագավորները. Գագ լեռն ու Գագայ գաշտը կազմել են Աղվանքի մի մասը։

<sup>36</sup> Աղվանուր.—հավանաբար Տայքի Կոտեր կամ Կոտսը գտվան է, վոր գտնվում է Դերջանի և Յեկեղյաց գագառների միջև. Այս գագառից է անցնում Յեփրատի արևելյան ճյուղը, վորտեղ շինված կամուրջը կոչվում է գագառի անունով, —Պուղպուր-Քյոփիք։ Ներկայումս Կոտեր գագառաւմ կա համանուն գյուղ։

<sup>37</sup> Մեր մյուս մատենագրների մոտ չկա այս տեղեկությունը: Մինչև այժմ հայտնի եր Հեթումի միայն Մանկու զանի մոտ կատարած այցելության մասին Յեթե այստեղ չկա Պատմական տեղեկությունների շփոթություն, ապա Հեթումի այս այցելության նշանակությունը իմաստ մեծանում ե և նոր լույս ափում հայ-մոնղոլական հարաբերությունների վրա։

<sup>38</sup> Վարդանի և Հուլավույի հանդիպման և նրանց միջև յեղած խոսակցության մանրամասնությունները տես Վարդան Բաբերեղցու պատմության, եջ 204—212, 1861 թ., Մոսկվա։

<sup>39</sup> Խոսող հավերի կոտորածի պատճանների մասին բացատրություն չի տրված, վորը պետք ե լիներ չար զիպաց նախագուշակ։ Հետաքրքիր ե այն, վոր խոսող հավերի «Պաշտամունքը» մինչև այժմ ել պահպանված ե արեվելքում։

<sup>40</sup> Ապլարայն-պետք ե լինի Ալպատան կամ Ալպիսթան. քաղաք և համանուն գավառում՝ Մարաշի հյուսիս-արևելյան կողմը։ Քաղաքը շինված ե Քյուրա կոչված լեռան ստորոտում. Զահան գետը բղիկուղ մերձական արևմտյան լեռներից և քաղաքի մոտ յերկուսի բանժանվելով իր մեջ և առնում Ալպիսթանը և հետո նորից միանում. Ալպիսթանը մոտ ե Կիլիկիային և համախի գտնվել ե հայ իշխանների ձեռքին։

<sup>41</sup> Գերեւարկ.—Հավանորդեն Կոմիտանյան Մանվելի 2-րդ գորդի Գեղվորդն է, վորը պետք ե գահ բարձրացած լիներ իր ավագ յեղարք՝ Անդրանիկոս 2-ից հետո, և վորոնց յերկուսի թագավորության տարիները պետք ե լինեն 1263—1280 թ.թ.։

<sup>42</sup> Սամ. Անկցու շարունակողի մոտ «Պապառադին» (եջ 162), վոր պետք ե լինի «Պապառալպին»։

<sup>43</sup> Քայիրաւն լեռան մասին մեզ ծանոթ հայկական աղբյուրներում չինք գտել վորեն հիշատակություն. ժամանակարի սեղմ վորը հնար չի առլիս մոտավորապես վորոշելու. Ալիշանը իր «Տեղեկագիր Հայոց Մեծաց»-ի մեջ (§ 6), «Վրանայոց լերանց» շարքում հիշում է Քայլուլի լեռների անունը, նույնացնելով Կանկալի հետ, վորոնց գտնը-վում են Գուգարքում. Ենթադրում ենք, վոր հենց Քայլուլի-Կանկալը լեռներն են Քայեթուն լեռը։

<sup>44</sup> Լեռնի այցելությունն Արդուն զանին տեղի յե ունեցել 1287 թ. իր մահեց քիչ առաջ. իսկ այդ ժամանակ Իկոնիայի «Հոռոմոց» սեղուկների գահի վրա յերկում ե վորն Մայուսու 2-րդ (ապանված 1309 թվին), վոր և համարվում է վերջինը, և վորի ժամանակ սեղուկյան այդ դինաստիան գտնել եր Եղանակության հարկատու մի փոքրիկ իշխանություն։ Անկանած Լեռն Գ-ի այցելության ներկա յեղողն «Հոռոմոց» Սուլտանն այս Մայուսու 2-րդն է։

<sup>45</sup> Զառա կամ Զարա.—գյուղ Սեբաստիայի մոտ, 12 ժամ հեռու գեպի արևելք, այժմ ել կոչվում ե նույն անվամբ։

<sup>46</sup> Պեհեսնին.—Պեսնի դյուզաքաղաքը Անթապի մոտ, դեպի հյուս-արևմուտք 2 որպա ճանապարհ հեռու Դյուզի միջով անցնում է-Սավրուն գետը, հարուստ և պտղատու և խաղողի այգիներով ու անտառ-ներով:

<sup>47</sup> Կամ կամ Կոկ.—պետք ելինի գավառ կաս քաղաք Կիլիկիա-յում՝ Զահան գետի ակունքների մոտ, Հաճընից հյուսիս Քոշ-տաղի շրջանում (տես «Սիսական», 180):

<sup>48</sup> Ախօսա, այլ կերպ Աշխար, ուղիղ ձեր պետք ելինի Ագշար (Սպիտակ քաղաք), կա նաև Ախշար-ովասի Ագշարի շուրջ, գտնվում է Յերզնկայի մոտ ընկած դաշտավայրի արևելյան կողմը, հիշում և նաև Թովմա Մեծոփեցին:

Անվանութեան	Տեղական անուն	Տարբ.	Վահ.
Անդամանաց	Անդամանաց	3	3
Անտեղաց	Անտեղաց	3	3
Անդամանաց քաղաքանի	Անդամանաց քաղաքանի	3	3



12,299

ԳԻԱԸ Յ ՈՒԽԵ.